

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

1963 թ. ավարտվեց մեծանուն գրող և մանկավարժ Ղազարոս Աղայանի «Ծրկերի ժողովածու»-ի չորսհատորյակի հրատարակությունը, որի վերջին հատորի երրորդ բաժինը պարունակում է Աղայանի նամակները: Ըիշտ է, նախորդ հրատարակության (1939—1950 թթ.) համեմատությամբ այս հրատարակության մեջ կրկնակի չափով ավելի են նամակները, բայց դրանցով էլ չի սպառվում ճիշտ կես դար բաղմակողմանի գործունեությամբ ապրած ու բազմազան կապեր ունեցած խոշոր գործչի նամակագրական ժառանգությունը: Աղայանի հետ նամակափոխանակություն կատարած անձանց թիվը հասնում է մոտավորապես 100-ի, իսկ գրած նամակների ընդհանուր թիվը՝ 200-ից ավելի է:

Չորրորդ հատորում տպագրված 50 նամակներից բացի անտիպ մնում են մոտ 30 նամակ ևս, որոնցից ընտրությամբ այստեղ հրապարակում ենք 10-ը: Սրանով Աղայանի տպագրված նամակների թիվը հասնում է ընդամենը 60-ի: Եթե նկատի ունենանք, որ Աղայանի առ այսօր հայտնի նամակներից միայն մի 20 նամակ է մնում անտիպ, ապա ուրեմն 100-ից ավելի նամակ դեռ մնում են անհայտ, որոնց զգալի մասը մեզ թվում է, հնարավոր է հայտնարեցնել:

Հրապարակվող նամակներից (1884—1910) մեկն ուղղված է Հովհ. Հովհաննիսյանին, հինգը՝ Հովհ. Թումանյանին և մեկը՝ Ալ. Շիրվանզադեին: Ուշագրավ են հատկապես Թումանյանին գրված նամակները, որոնք արտացոլում են երկու մեծ գրողների հոգեհարազատությունն ու սրտագին բարեկամությունը: Այդ նամակները, միաժամանակ, մոտավոր գաղափար են տալիս Աղայանին ուղղված՝ Թումանյանի առ այսօր անհայտ մի շարք նամակների բուլանդակության մասին:

Հրապարակվող նամակները մեծ մասամբ գրված են 1897—1900 թթ. և կարևոր լրացուցիչ խնդրանքներով ավերագրեր են Աղայանի կյանքի այդ եռամյա շրջանի վերաբերյալ:

Ուշագրավ է նաև իր մոտիկ բարեկամ, մանկավարժ ու գրական գործիչ Ավետիշ Լզեկյանին՝ 4. Պոլսից, 1892 թ. փետրվարի 6-ին գրված նամակը, որը մեզ է հասել հասցեատիրոջ մի նամակի միջոցով (տե՛ս 15—20-րդ ծանոթագրությունները): Մեզ վաղուց հայտնի էր Աղայանի արտասահմանյան ուղևորությունը՝ 1892 թ. սկզբին (հունվար-մարտ), գիտեինք, որ նա եղել է նաև 4. Պոլսում, բայց մինչև այժմ հայտնի չի եղել, որ Աղայանը Պոլսում հանդիպումներ է ունեցել արևմտահայ նշանավոր գործիչներ Արփիար Արփիարյանի, Մարկոս Աղաբեկյանի, Գարեգին Սրվաձաժյանի, Գարեգին (Մելիքսեդեկ) Մուրադյանի և մյուսների հետ, այցելել «Արևելք»-ի և «Մասիս»-ի խմբագրությունները: Այս ամենի մասին մենք առաջին անգամ տեղեկանում ենք վերահիշյալ նամակից:

Հրապարակվող նամակների խնդրագրերը պահվում են Հայկ. ՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանում՝ Ղ. Աղայանի ֆոնդում (1, 3 և 9-րդ նամակներ), Արխիտուկես եպ. Սեդրակյանի ֆոնդում (2-րդ նամակ), Հովհ. Թումանյանի ֆոնդում (4, 5, 6, 7 և 8-րդ նամակներ), Գարեգին Լևոնյանի ֆոնդում (10-րդ նամակ):

Նամակների ընագրերում հեղինակի ջնջած առանձին բառերն ու նախադասությունները քնդում ենք թառակուսի [...] փակագծերում, իսկ բաց թողածների մեր լրացումները տալիս ենք սուր <...> փակագծերով:

Ա. Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Փ Ա Ս Ս Ա Ք Դ Ք Ե Ր

№ 1. Հովհաննէս Հովնանիսյանին

30 դեկտեմբերի, 1884, Տփլիս¹

Մեծապատիվ պարոն

Հովհաննէս Հովհանիսյան²

Ստացա Ձեր պատվական նամակը³, ընդնմին և Մոսկվայի հայ ուսանող-
ների գրականական ընկերությունից ուղարկված «Զորս Առակ» գրքույկից⁴
երեսուն և մի օրինակ—մեկն ինձ նվիրված, իսկ երեսունը գայրոցներին բա-
ժանելու համար։ Լրագրների մեջ հայտարարելը ստացողներին թողնելով՝ ևս
կարող եմ հարցելի ընկերությանն ապահովացնել՝ մի ցուցակ ուղարկելով՝
թե ո՞ր գայրոցներն են ստացել։ Իմ տալիք տեղեկությունը փոքր ինչ կուշանա,
որովհետև շատ տեղ փոստ չի գնում, և եղանակը ձմեռնային լինելով՝ նվա-
զած է հասարակ երթևեկը։

Իմ խորին շնորհակալությունը հայտնելով՝ կմաղթեմ, որ աստված զո-
րացնէ հայրենասեր ընկերության ջանքն ու եռանդը և բեղմնավոր կացուցանէ
նորա ցանած բարի սերմերը մանուկ սերունդի մտավոր անդաստանի մեջ։

Թ<ւմական> վ<երատեսուչ> Ղազարոս Աղայանց

№ 2. Ավետիս Եզեկյանին⁵

6 փետրվարի, 1892, Կ. Պոլիս

«Ընկա Պոլիս, կես ձկան բերնից ժայթքված Հոնանու նման։ Շատ մար-
դիկ տեսա, շատ տեղ պտրտեցի։ Նախ Արփիարին⁶ տեսա և հետո Էդրարց
Աղարեղյաններին⁷, Սրվանձաճյանին⁸, Մուրադյանին⁹, Մկրչանին¹⁰ և նույ-
նիսկ Մանկունուն¹¹։ Եղա և Արեւելքի¹² ու Մասիսի¹³ խմբագրատներում։ Ամեն
տեղ և ամենից սիրահոժար և անկեղծ ընդունելություն գտա, բացի Արեւելքի
խմբագրից, որ Սպանդարյանի¹⁴ և Արդարի¹⁵ տալովորությունն արավ ինձ
վրա։

Այստեղ պատգամավոր ընտրելու¹⁶ համար և ոչ մի քայլ եղած չէ։ Ասում
են բարձրագույն հրաման չեն ստանում աղղային ժողով գումարելու և ինչ
անելիքները որոշելու։ Ասում են Պատրիարքն¹⁷ է ձգձգում, որ կարողանա հա-
ջողցնել իր մարդիկն ընտրել տալու, որ իր համար քվե տան։ Այսօր էլ խոսում
են, թե «պատրիարքը» բարձրագույն տեղից վերջնական բացասություն¹⁸ է
ստացել և պատրաստվում է հրաժարական տալ։ Լրագրերը թույլտվություն
չունին այս խնդրի մասին գրելու կամ կաթուղիկոսական թեկնածուների անուն
տալու։ Հոգևորականությունը սաստիկ դեմ է Հայրիկին։ Ասում են այստեղից
զնացող պատգամավորները չեն կարող Հայրիկի համար ձայն տալու, կրվա-
խենան այստեղի կառավարությունից։ Այսպես ահա այստեղ ոչինչ չկա դեռ


ևս և հույս չունիմ որ լինի էլ Գալֆայանի անկումը՝ արդեն իմացած կլինիք։ Պիտի արտոլի, բայց հայտնի չէ՝ ուր։

Ազգային վարչական կյանքն այստեղ կատարելապես մեռած է, խլարկում են ձկների պես...»²⁰։

№ 3. Անահիտ Աղայանին²¹

10 հոկտեմբեր, 1998 Ն.-Նախիչևան-Զ

Սիրելի իմ Անահիտ,--նամակդ ստացա՞նք, որ գրած ես անցյալ հուլիսի 25-ին։ Այս նամակով ուղարկում եմ մի քանի ուրվիկներ, որ ուզել ես։ Ուղարկածս տասր ուրվիկ է, իհարկե շատ քիչ է, բայց շատ շունեի, որ շատ ուղարկեմ։ Քանի որ ինձ մոտ էիր, դու



Ղ. Աղայանը 1896 թ. ապրիլին, Մեմֆիսի րանտից դուրս գալուց հետո
Տպագրվում է առաջին անգամ

ինձ համար խարջուիս էիր աշխատում, ինչպե՞ս է որ հիմա էլ չես աշխատում, մի՞թե գանձակեցիք շուկու գակալ չեն տալիս։ Եթե մեքենա չես բանացնում, էլ ի՞նչ հարկավոր է, որ պահում եք, կարող եք ծախել և նրա փողը ծախսել, միայն թե նեղություն չքաշեք։

Մկրտչին²⁴ վաղուց է, որ նամակ եմ գրել²⁵, բայց պատասխան չեմ ստացել։ Դու կարող ես միշտ գրել և շուտ շուտ գրել, քանի որ ըույրերդ՝ մեկը իրանով և մյուսը՝ երեխաներով գրադված լինելով՝ չեն կարող գրել։ Ինչո՞ւ չես գրում թե ինչպե՞ս է Հայկանուշը և ե՞րբ է պառկելու ժամանակը։ Հոփսոփ առողջությունը ինչպե՞ս է, արդյոք արյան պակասություն չունի՞ ալլևս, ախորժակը լավ է. գրի՞ր մանրամասն և երկար։ Միթե կարող չէ՞ք դու և Հայկուշը այգեքաղին գնալ մեր տուն, եթե Հայկա-

նուշի հանգամանքը ներելու լինի։ Մկրտիչը ոչինչ չի գրում, ևրևի սպասում է դեռ պաշտոն գտնի և հետո պրի։

Մենք այստեղ ամառը լավ անցկացրինք, հով էր, շոգից չընեղացանք, բայց առաջիկա ձմեռը ինձ սարսափեցնում է։ Եթե հնար գտնեմ, պետք է տեղափոխվեմ հորիմու թերակղզին²⁶, ուր ձմեռը շատ մեղմ է և ցուրտ չի լինում։

Այստեղ ամենայն ինչ անհամեմատ էժան է, քան թե Թիֆլիսում։ Հինգ կոպեկով այնպիսի ձմերուկ և սեխ են տալիս, որ Թիֆլիսում 30 կոպեկից պակաս չեն տալիս։ Ամսական 15 ուրվով այնպիսի բնակարան ենք վարձած, որ Թիֆլիսում քառասուն ուրվով չեն տալ։ Ես պարապ չեմ, շարունակ գրում²⁷։

և թարգմանում եմ³⁰, քեզ պես ծուլութիւն չեմ անում, չնայած, որ հենց այն մատներս, որոնցով գրիչ եմ բռնում, սկսել են ցնցվել և դողդողալ, երբեմն էլ կուչ են գալիս, ինչպես էջմիածնում²⁹։ Ճարս ի՞նչ, պետք է ինչպես լինի, գործածեմ մատներս։ Մայրդ շարունակ խարբուխ ունի, հիմա էլ կշտիս կանգնած համ կարդում է գրածս, համ մամսացնում քթումը։

Այսօր հրիմից հորեն եպիսկոպոս Ստեփանեից³⁰ մի փոքրիկ տակառ գինի ստացա ընծա։ Հին գինի է և շատ պատվական։ Բոլորիդ կենացն էլ կոնծեցինք։ Գանձակեցի տեր-Գրիգոր Բաբաքեխվյանյանցն այստեղ էր, նրա հետ էլ բարեներ ուղարկեցի։ Նա կրգա Հաջիքենդ և ձեզ կտեսնի անշուշտ, իմ լավ բարեկամս է։

Հայկանուշին և Հռիփսոյին առանձին նամակ չեմ գրում. դու քո բաժնից նրանց էլ բաժին կրտաս, իսկ Սուրենիկին³¹ կրպաչես պապիկի փոխարեն։

Լուսիկը՝ շատ է ուզում քեզ նամակ գրի³², բայց չի կարողանում, խաղմրզում է սուտ-սուտ և սուտ-սուտ էլ կարդում է, բայց շարադրութիւնը լավն է լինում միշտ, երևում է, որ ապագայում բանաստեղծուհի պետք է դառնա։

Դիտեմ, որ փող ուղարկելուս համար Միքայելը³⁴ պիտի նեղանա և քեզ վրա բարկանա, թե ինչու ես հայրիկին նեղութիւն տվել։ Հիմա դու գիտես Բե ինչ պատասխան կտաս, ես ձեր կովումը չեմ խառնվիլ։

Անահիտ ջան, ջանք արա այս տարի ինքդ պահել քեզ քո ձեռքի աշխատանքով, ինձ վրա շատ հույս չդնես, բայց հավատացած եղիր, որ ես՝ հենց որ ձեռքս մի բան ընկնի, քեզ չեմ մոռանալ³⁵։ Իմ դժվարը մինչև հունվարն է, տոներին խնդրեմ թոշակս³⁶ ստանալ և քեզ էլ ամսե ամիս մի բան ուղարկել, մինչև տեսնենք աստված ինչ է տնօրինում։

Որ գնաք Բաքու, այնտեղից իսկույն մի նամակ գրես ինձ մանրամասն տեղեկութիւններով։

Քո հայրիկ Ղ. Աղայան

№ 4. Հովհաննէս Թումանյանին

9 մայիսի, 1899, Հին-հրիմ

Ուղարկած 60 ռ. ստացա։ Ես առողջ չեմ, օրինավոր թոքախտ ունեմ, թեև բժիշկները ուրիշ անուն են տալիս և ասում են շուտով կանցնի թոքերիս ծակոցն էլ, արյունն էլ։ Եվ կանցներ, եթե նորանոր հարվածներ չհասնեին հոգուս և մարմնիս, ինչպես, օրինակ, քո տված լուրն է Բաղվի կողմից³⁷։ Գուցե կարծել են, որ ես ապահովված եմ ում և իցե կողմից, ինչպես հիշել էիր առաջին նամակումդ³⁸։ Թող այդ հանգամանքը ապացուցանեն, հետո ինչ կուզեն անեն։ Նախիջևան եղած ժամանակս ամսական 25 ռուբլի եմ ստացել Եկատերինոգարցի Ս. Խարազյուլյանից, 25 ռուբլի էլ իբր թե կարգին ստանում եմ ս. Սարգսի վարդապետից, բայց մի՞թե 50 ռուբլիով կարելի է ընտանիք պահել, ճանպի ծախք վճարել (եթե չհոգային բարի մարդիկ) և այլ հազար ու մեկ ցավեր հոգալ։ Է՛հ, չարժե ապրել, զոռով ապրել չի լինիլ։

Քո Ղ. Աղայան

N 5. Հովհաննես Թումանյանին

5 հուլիսի, 1899, Հին-Խրիմ

Սիրելիդ իմ Ասլան-բալա³⁹.

Նամակ գրելու նորաթր քոնն է, բայց ես գրում եմ հաղորդելու համար ձերկու-երեք բան: Մի անժանոթ տիկնոջից⁴⁰ ստացա 25 ոուբլի. հայտնիք նրան շնորհակալություն: Բազմից ստացա թոշակիս կեսը, երևի մյուս կեսն ևս կըստանամ: Ուրեմն քո ունեցած տեղեկությունդ սխալ է: Պոռշից⁴¹ ստացա հիսուն ոուբլի: Ուրեմն էլ ինձ համար դարդ չանես մինչև գալս,—բոլորովին ապահով եմ:

Քո Աս<լան> Ապեր

N 6. Հովհաննես Թումանյանին

4 սեպտեմբերի, 1899, Հին-Խրիմ

Սիրելի իմ Ասլան-Բալա: Վերջապես նամակիդ շարունակությունը¹² ստացա: Վաղը չէ մյուս օրը ճանապարհ ենք ընկնելու դեպի Խրիմու թերակղզին: Ես շատ հիվանդացա, սկսեցի արյուն թքել, խնդիր տվի, որ թույլ տան ինձ տեղափոխվել դեպի հարավ, խնդիրս մերժեցին, բայց, չգիտեմ ինչ նոր հանգամանքի շնորհիվ՝ նորերս մի հրաման եկավ, որ այստեղ աքսորվածները նոր տեղ ոռոնին ու հեռանան Ռոստովի և Թագանրոգի շրջաններից: Ամենքն էլ իրենց համար մի մի նոր տեղ ընտրեցին, ես էլ իրավունք ստացա իմ ուզած տեղն ընտրել, այն է՝ Խրիմի Թեոդոսիա քաղաքը, ուր հասնելուս պես կգրես քեզ իմ հասցեն⁴⁴: Տկարությանս պատճառով, էլ չեմ ծխում և ոչ էլ խմում դինի կամ արաղ:

Թոշակիս վերաբերությամբ էջմիածնեցոց արածը զարմանալի չէ⁴⁵: Աստված տա, որ ճշմարիտ լինի, որ իրավունք ունենամ ասելու՝ «Մնունդք, զորս ոչ արար աստված», դրանց հետ մի պատերազմ սկսելու համար, և նախքան սկսելս, պիտի ասեի,—«Ախպեր, առեք ձեր էրկու շահին, ձեր քթի հալը հալ չի»—էլ ինչի՞ թուղթ տանք վարդապետին, մի՞թե դու չես տվել, կամ ես հակառակ եմ քո ստանալուն, բավական է, որ դու ինքդ ապահով լինես, որ ուղարկածդ ստացել եմ: Այսուամենայնիվ սրա հետ ուղարկում եմ ահա մի ստացագիր, որ 1898-ի օգոստոսից սկսած մինչև 1899-ի ապրիլի վերջը, գրեթե 9 ամիս, հասանելիք թոշակս ստացել եմ Հ. Թ. վ. Առյուծյանից⁴⁶: Ստացագիրս չես տալ, մինչև, ինչպես ասված է,—ապրիլի վերջը թոշակս լրիվ չի վճարիլ:

Բազմի մասին ոչինչ չես գրում, երևի այնտեղից այլևս հույս չպիտի ունենանք:

Մինասի «Կյանքը»⁴⁷ կախում ունենալով Նախիջևանի մեռած կյանքից, դեռ չծնած՝ մեռավ: Քո ուղարկած սատիրան⁴⁸ չեմ տեսել, այսուհետև էլ ժամանակ չեմ ունենալ տեսնելու:

Ուրախ եմ, որ սկսել ես լուրջ պարապել: 3 գրի մասին իմ կարծիքս է—չգրել այն տեղերում, ուր նա ձայն չունի, և գրել ու, ուր նա այդպես է հնչվում: Ալեքսանդրապոլցիք հ ե յ գրերը միևնույն են հնչում, ասելով—սայման, իբրև սահման, անմայ=անմահ...

Պոռչյանցին իմ կողմից բարեիր, ասում—մենք այստեղ արդեն կատարեցինք քո հորելյանը⁵⁰ մի նվագահանդեսով, որից մոտ երկու հարյուր մանեթ զուտ արդյունք ստացվեց։ Եթե ամեն քաղաք երկու հարյուր լինի տալու, արդյունքը, իրավի, քիչ կլինի։ Բայց պետք չէ հետաձգել։ Մի հիսնամյակ էլ կարելի է կատարել ութ տարուց հետո, որ կրկին ուղիղ հիսնամյակ։

Բմ հիսնամյակը լինելու է 1912 թվին։ Եթե այդ տարին ես չմեռնեմ և մինչև այդ տարին էլ ապրած լինեմ⁵¹, այնուհետև կարող եմ ապրել էլի 9 տարի՝ 1921 թվի։ Եթե այդ տարին էլ չմեռնեմ, դրանից հետո կապրեմ էլի 9 տարի, իսկ այնուհետև էլ չեմ կարող ապրել։ Այս հաշիվը մի խաղ է։ Բմ ծննդյան թվականը լինելով 1840, դրանց (թվանշանների) գումարն է 13։ Այսպիսի գումար ունեն և 1921-ը և 1930-ը, երբ ես կլինեմ 90 տարեկան։ Էգուց բժիշկը պիտի քննե ինձ։ Եթե արյուն թքելս թոքաղտ չլինի, կարող եմ ապրել 90 տարի։ Կրցանկամ, որ դու էլ ապրես երկար և շատ աշխատես։

Քո Ասլան Ապեր-

№ 7. Հովհաննես Թումանյանին

<14 նոյեմբերի, 1900, Բաքու>⁵²

Սիրելիդ իմ Ասլան Բալա.

Իմացա որ եկել ես քաղաք։ Ուրեմն և կրկատարես իմ հանձնարարությունս, որ է՝ քեզ մոտ և մեր տանը եղած իմ ծախու գրքերից⁵³ երկու արկղ լցրու և ուղարկիր իմ անունով՝ քրեհր այստեղ ինձանից ստանալու պայմանով։ Մի երկար նամակով էլ նկարագրիր քո այժմյան վիճակը և մտադրությունդ ու հույսերդ⁵⁴։ Ես բավական հուսախաբված եմ, մեկը պետք է գրքերս տպագրեմ⁵⁵։—հետ դառավ խոսքիցը խողովարի։ Նամակդ որ ստանամ, այլև գրքերս, հետո երկար կգրեմ։ Բարև տիկնոջը, տերին⁵⁶ և համբույր երեխանցդ։ Նամակդ փակ գրիր։

Քո Ասլան ապեր։

№ 8. Հովհաննես Թումանյանին

7 դեկտեմբերի, 1900, Բաքու

Սիրելիդ իմ Ասլան բալա.

Բիրի Հեյրաթ ուղղած անթվական նամակդ ստացա⁵⁷։ Շնորհավորում եմ № 8-դի⁵⁸ ծնունդը, և որովհետև այդ նորածնի սևոր ծածկել ես, չես գրել, թե ինչ է, տղա է թե աղջիկ, այս պատճառով թող դրա անունը լինի Արեգ, և այդ անունը տվածին պես՝ թող տղա դառնա։ Կարծեմ այդ անունով դեռ ոչ ոք հայտնի չէ մեղանում։ Հա՛, ես կարծում եմ որ տղա պիտի լինի, հոգևրանական օրենքով, որ աղջիկ լինեք, կրդրեիր։ Մեկ էլ որ դրանից առաջ ծնվածը աղջիկ էր, հերթը տղայի էր։

Ես չեմ գրել, որ քեզ մոտ երկու արկղ գիրք կա, այլ թե՛ Բեգ մոտ և ինձ մոտ եղած գրքերից շինել երկու արկղ և ուղարկել։ Եթե լավ չիմանալը ծուլու-

թյան նշան չէ, խնդրեմ ջափա քաշեցեք ուղարկել: Մախում եմ $\frac{1}{4}$ գնով... Մեկ արկղ հենց «Ժամանակակից ատենախոսություն» կրլինի, գուցե և ավելի: Այստեղ շատ կրծախվին դրանք: Ճանապարհածախքը ես այստեղ կրվճարեմ:

Իմ մասին որ երկար չըզրեմ, կարճն այս է: Տարեկան խոստացած թոշակս վեց ամսից հետո դադարեցրին, այս մեկ: Այն մառդը, որ պիտի գրքերիցս երկու հատոր տպագրեր, իր ծախքով և ինձ հազար մանեթ վարձ տար, հետ դառավ իր խոստումից, այս երկու ինչու համար, որ ինձ հրավիրել էին⁵⁹, կեղծ դուրս եկավ, և ես հարկադրվեցա նոր տեղ օրոնել ուր և կամ հիմա⁶⁰, այս էլ ահա երեք: Հիմա երեք տեղ դաս ունեմ, թափառում եմ քաղաքի մի ծայրից դեպի մյուսը՝ թող ու քամի չու տալով և ցրտահարվելով ծերությունս հասակում: Ցավակից ոչ ոք չունեմ, նույնիսկ հարազատներս մեջ: Իմ կյանքս այժմ մի մազի վրա է, կարող է հանկարծ կտրվել: Այս միայն քեզ եմ ասում, դու ոչ ոքի չասես, պետք է համբերել առ ժամանակ: Երկրվանն⁶¹ ավելի բախտավոր է, Մանթաշոֆը նրան միանվագ մի քանի հարյուր մանեթ տվավ մոտ օրերս և մի որդուն էլ որդեգրեց. երևի զորեղ բարեխոս է ունեցել: Ես շատ ուրախ եմ այս բանին, լավ օրինակ է, մեզ էլ կարող են այդպիսի մարդիկ պատահել:

Լսեցի որ Փիլիպը հրատարակչական ընկերություն⁶² է կազմել: Ուրախացա, ենթադրելով, որ դու կարող ես պաշտոն ունենալ, գուցե ես էլ... Այս մասին մի տեղեկություն գրիր: Նոր «Մուրճին»⁶³ կաշխատակցես անշուշտ, ուղղագրությունը չըփոխելու պայմանով. ես նույնպես (հրավեր ստացել եմ):

Գալֆայանի⁶⁴ մասին որոշ բան ասել չեմ կարող, սիրտդ ինչու կոտրեմ: Խրիմյանից հուսախաբվելուց⁶⁵ հետո, ես այլևս հեշտ կերպով չեմ հավատում մարդկանց: Ի դեպ, Գալֆայանի⁶⁶ գրեցի, որ քո թոշակը Շահգեղանից առնե նրան տա: Ասացի որ այդպես հիմարություն չանե: Վաղը ես կըտեսնեմ Գարեգին և այնպես կանեմ, որ ուղղակի ուղարկենք քեզ: Այնպիսի ազնվություն կա, որ իսկապես անազնվություն է: Մեկ մտածիր քեզ ու քեզ, թե ինչ է քո արածը, թե ում հոգսը պիտի քաշես դու առաջ ու առաջ: Քեզ լավություն անողները քեզ չէ որ անում են, և ոչ իրանք են որ անում են, այլ աստված է որ սրա նրա ձեռքով կերակրում է քո առաջին նոմերից սկսած մինչև ութերորդը⁶⁷: Երբ որ աստուծու տվածից մի բան դու ավելի կունենաս, այն կարող ես տալ ուրիշի... Ես չըզիտեմ թե ինչպես դերասան կարող է լինել Գալֆայանը, քանի որ միշտ փախուստ է տալիս խաղալուց ու հանցանքը սրա նրա վրա ձգում, ոչ մի բարեխոսություն ես չեմ խնայում նրա համար, բայց կարծեմ ի դուր է, ի դուր...⁶⁸

№ 9. Ստ. Լիսիցյանին⁶⁹ և Լևոն Շանթին⁷⁰

2 օգոստոսի, 1907, Քիֆիս

Հարգելի պարոններ

Ստեփան և Լևոն

Ձեր նամակն ստացա: Ձեր առաջարկությունը՝ հոգվածներ փոխանակելու մասին՝ ես սիրով կընդունեի, եթե մի խոշոր անհարմարություն չլիներ մեջտեղ: Այդ այն է, որ դուք իմ նաղվող ձեր նիստի հետ եք ուզում փոխանակել: Երբ հրապարակի վրա կըղենք ձեր աշխատությունը, և ես կտեսնեմ թե, իմ

տվածի տեղ ի՛նչ եմ ստանում Ձեզանից, այնուհետև միայն կարող եմ տալ իմ համաձայնությունը, փոխադարձ օգտվելն էլ կրիինի միաժամանակ։ Օհանեսից ես օգտվել եմ իմ մյուս դասագրքերում⁷¹, նույն օգուտն էլ ես պատրաստ եմ տալու նույնանման գրքերում, բայց ոչ Այբբենարանումս, ուր նրանից ոչ մի տող չըկա։ Բայց և մի ուրիշ առակ ասեմ ձեզ. եթե Օհանեսը համաձայնի ինձանից վարձ ստանալ, նա այդ վարձը խո չի բաժանիլ Ձեզ հետ. — Ի հարկե, ոչ, եթե ոչ, ապա նա փոխանակ վարձի, ինչո՞ւ պիտի իմ հողվածներս տա Ձեզ՝ իբրև ընդհանուր սեփականություն։ Ուղիղն ասեմ՝ այս հանգամանքն ինձ համար մոթն է և կուզեի մի իրավաբանից իմանալ այս հակասությունը։ Վերջապես ես ու Օհանեսը իրար հետ կհաշտվենք. դուք իղուր եք ձգտում նրա անունը շահագործել Ձեր օգտին։ Դուք երկուսդ իմ գրքերին ոչ մի տող չեք տված և ապագայում էլ, կարծեմ, տալիք չեք կարող ունենալ։ Ուռնին ուռ կտա և ոչ նուռ։

Առ այժմ այսքանը⁷²

2-ն օգոստոսի 1907, Թիֆլիզ

№ 10. Ալեքսանդր Շիրվանզադեին

Առ պարոն Շիրվանզադե⁷³

Սիրելիդ իմ Շիրվան,

Դու լավ ես բնորոշել ուղղագրությունը, նմանեցնելով մախաթի։ Մեր ուղղագրությունը իսկ և իսկ մախաթ է, որի սուր ծայրը ուղղված է «Մշակի» և նրա արբանյակների դեմ։ Այդ լրագիրը հանգստություն չունի, որ կողմ շրջվում է իմ ցանած մախաթների ծայրերին է դիպչում և բարկությունից սկսում է աքացի տալ, մոռանալով սուրբ գրքի ասածը, թե՛ «Խիստ է քեզ ընդդեմ խթանի աքացել»...

Այդպես են բոլոր ժամանակի և տեղի փարիսեցիները, դրանք մժղուկը ցրքամեն և ուղտեր կուլ կրտան։

Ուղղագրությունը «Մշակի» համար խնդիր չէ, այլ պատրվակ։ Մի ժամանակ այդ թերթն այն աստիճան գոռոզացել էր, որ ասում էր՝ արտաքո «Մշակին» հայոց ազգին փրկություն չըկա։ Բայց այսօր էլ չունի ոչ մի հեղինակություն, ինքն էլ իր մեջ բաժանված է. Քալանթարը՝⁷⁴ մի կողմ է քաշում, Համբարձումը՝⁷⁵ մյուս, իսկ Սարուխանը՝⁷⁶ իբրև Մեֆիստոֆել՝ ուզում է հանգամանքից օգուտ քաղել և նրանց ուղղագրությունը կաթոլիկացնել։ [Մարգ իմանա, ինչ է ուզում մեզանից այդ Սարուխան ասածը]։

Պիտի ասես՝ մի՞թե ուղղագրությունը կարող է կաթոլիկ դառնալ։ Քո տունը շինվի Շիրվան։ Եթե ուղղագրությունը կարող է մախաթ դառնալ, ինչո՞ւ չի կարող նաև կաթոլիկ դառնալ։

Հայ լուսավորչական վարդապետների դժբախտության շնորհիվ Մխիթարյանները կարողացել են հայոց ազգին գիրք և դրականություն տալ նախ գրարար և հետո աշխարհաբար։ Նրանք իրանց համարելով ակադեմիկոսներ, սրբագրել են հայոց լեզուն, ինչպես իրանց ճաշակն է թելադրել։ Նրանք մեր մատենագրությունները տպագրելիս՝ նրանց ուղղագրությունը չեն պահպանել։

Օրինակ բայերից վերացրել են օղ վերջավորությունը և փոխարենը դրել ՈՂ:

Այսօր մենք ամենքս գրում ենք ՈՂ, և ոչ ոք մեզանից չի բողոքում, թե ի՞նչ իրավունքով են փոխել նրանք մեր այդ սրբուզան հնչյունը: Չէ որ նախքան Ս գրի ներս գալը, դա գրվում էր աւղ. իսկ այդ ժամանակ դրա կողքին գոյություն ունեւ Ո գիրը, բայց ոչ ոք չեր գրում ՈՂ: Երբ ներս մտցրին Ս գիրը, այնուհետև սկսեցին գրել ՕՂ և ոչ ՈՂ: Բայց Մխիթարյանները իրավունք համարեցին գրել ՈՂ: Մեր ձեռագրերում և տպագրերում իննահնչյուն Ու բաղաձայնի վրա թավ նշան կար, Մխիթարյանները վերացրին այդ նշանը և կրովելու նոր առիթ ստեղծեցին, թե այդպիսի տեղերում մի՞թե կարելի է ձայնավոր Ու գրել և ոչ վե կամ վին: Միևնույն Մխիթարյանները աղավաղեցին մեր նախնյաց սուրբ և անսխալ տառադարձությունը և սկսեցին ինքնահնար տառադարձություն մտցնել մեր նոր գրականության մեջ և ավելի ևս աղավաղել տաճկահայոց գրականությունը: Օրինակ գրում են Տարուին, փոխանակ Դարաինի, Կլատսդոն՝ փոխանակ՝ Գլադստոնի, ձար՝ փոխանակ ցարի և այլն:

Մեզ ասում են, որ մենք հետևենք տաճկահայոց գրականության ուղղագրությանը, առանց ի նկատի ունենալու այն աղավաղմունքը, որ կաթուղիկների շնորհիվ մտած է նրանց լեզվի և հնչյունների մեջ: Նրանց ընդունելով՝ պետք է հնչենք փեն, ֆիմ, քա և այլն, պետք է գրենք րլլայ, մրլլայ, կրսեմ, կրնեմ, կրրնամ, բացուեցավ, գոցուեցավ (փոխանակ՝ բացւեց, գոցւեց) և հազարումեկ թուրքական ու հարեմական ոճ ու զրույց:

Ամենից ուղիղն այն կրօնի, որ մեր էջմիածնի վարդապետները Մխիթարյանների փեշիցը շրբոնեն, թափ տան նրանց փոշին մեր լեզվից և գրականությունից և սկսեն մեր անցյալ նախնյաց և ներկա հայ ժողովրդի հեղինակությունը հետևել:

Ես որ ու-ական սղագրությունը անվանել եմ ունիթոռական, դա մի սխալ չէ, այլ պատմական փաստ: Ունիթոռներն աղավաղել են մեր ամբողջ մատենագրությունը, իսկ նրանց կիսատ թողածը շարունակել են Մխիթարյանները անգիտությամբ: Փեն, ֆիմ, քա ասել տվողներն էլ դարձյալ ունիթոռներն են եղել իրենց բառարաններով և ուսուցչությունով: Այդ սխալը պատմական սխալ չէ, լեզվական սխալ չէ, այլ սխալ դպրության, սխալ ուսուցչության արդյունք է:

Այս առիթով շատ բան կա ասելու, բայց առայժմ բավականանանք այսքանով:

Քո Ղ. Աղայան

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նամակը գրված է Վրաստանի հայկական դպրոցների թեմական վերատեսչի պաշտոնական բլանկի վրա («Վերատեսուչ հոգևոր դպրոցաց հայոց թեմին Վրաստանի և Իմերեթի. 30-ն դեկտեմբերի, 1884, Տփլիս»)։ Աղայանն այդ պաշտոնումն էր 1883 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 80-ական թթ. վերջը։

2. Բանաստեղծ Հրվհ. Հովհաննիսյանը սկսած 1883 թ. սեպտեմբերից սովորում էր Մոսկվայի համալսարանում և Աղայանի նամակում հիշված Մոսկվայի հայ ուսանողների գրականական ընկերության քարտուղարն էր, որի ուղարկած գրությունն է պատասխանում Աղայանը, որպես թեմական վերատեսչի։

3. Բերում ենք այդ նամակը, որ գրված է 1884 թ. դեկտեմբերի 12-ին, հիշյալ ընկերության տպագիր բլանկի վրա.

«Մեծապատիվ պարոն Ղաղարոս Աղայանց.

Ընկերությունս ուղարկելով Ձեզ 30 օրինակ «Զորս առակ», պատիվ ունի խնդրելու Ձեզ տարածել այս գրքույկները Ձեր թեմումը ընկերությանս կողմից Ձեր խնամոցը հանձնած չպրոցներում։

Ընդունեցեք մեր խորին հարգանաց հավաստիքը։

Քարտուղար գրականական ընկերության Հովհ. Հովհաննիսյան։

4. «Զորս առակ մանուկների համար» վերնագրով գորույկը լույս է տեսել 1884 թ. սկզբին Մոսկվայում Հայ ուսանողների գրականական ընկերության (Մ. Հ. Ո. Գ. Ը.) նախաձեռնությամբ ու հրատարակությամբ և պարունակում է հետևյալ առակները (արձակ), «Մրմռան կատու» (թարգմանություն), «Կապույտ կրակ» (թարգմ. Հարությունից), «Կախարդ կանայք» (Պերոյից) և «Փինաչի» (ժողովրդական հեքիաթ)։

5. Կ. Պոլսից Աղայանի գրած այս նամակը հայտնաբերվեց միայն վերջերս՝ Արիստ. Եպ. Սեդրակյանի (1844—1906) արխիվում։ Նամակի ամրոցությունը առայժմ հայտնի չէ, իսկ այս կարևոր հատվածը Ավ. Եղեկյանը մեջ է բերում իր 1892 թ. փետրվարի 16-ի նամակում՝ ուղղված Սեդրակյանին։ Եղեկյանի այդ նամակից միայն ստույգ տեղեկանում ենք, որ Աղայանն իր արտահայտմանյան ուղևորության ընթացքին Կ. Պոլսում «զկա է առել ութ օր» և ապա փետրվարի 6-ին այնտեղի ուղևորվել ղեպի Երուսաղեմ։ Աղայանի այդ ուղևորության ընդթիվ և հարակից հարցերի մասին տե՛ս Ղ. Աղայան, «Երկերի ժողովածու», հ. 4, 1963, էջ 311—315 («Իմ տեսակցությունը Խրիմյան Հայրիկի հետ»), 526—529 (Ար. Եպ. Սեդրակյանին ուղղված Աղայանի երկու նամակը իր ուղևորության մասին) և համապատասխան ծանոթագրությունները՝ էջ 615—617, 654—656։

6. Արփիար Արփիարյան (1851—1908) — արևմտահայ անվանի գրող-հրապարակախոս և աղգային-քաղաքական գործիչ, Պոլսի առաջադեմ «Հայրենիք» լրագրի (1870—1909) խմբագրապետը 1890-ական թթ. Արփիարյանի հետ ունեցած այս հանդիպման փաստը հասկանալի է դարձնում դրանից երկու տարի հետո՝ 1894 թ. փետրվարին, էջմիածնից-Թիֆլիս Թումանյանին ուղղած նամակում Աղայանի խոսքերն այն մասին, թե ինքը պալու է Թիֆլիս, որտեղ, գրում է նա՝ «ես կիմրեմ իմ շուրս կողմս ինձ նման մառդիկ և ունեմ էլ աղին, մեռ բղրակցությունը կլինի Պոլսի «Հայրենիք»-ի հետ...» և այլն (տե՛ս Ղ. Աղայան, «Երկերի ժողովածու», հ. 4, էջ 537)։

7. Աղարեկյաններ — նկատի ունի, անշուշտ, առաջին հերթին Մարկոս Աղարեկյանին (1830—1908) — հրապարակախոս, մանկավարժ ու պատմաբան, Թիֆլիսի «Կուռնկ հայոց աշխարհի» ամսագրի (1860—1863) խմբագիր, որի հետ Աղայանը շատ մոտիկից ծանոթ էր 1859—1862 թթ., երբ գրաշար էր Հ. Էնֆիաճյանցի տպարանում, որտեղ տպագրվում էր Աղարեկյանի հիշյալ ամսագիրը։

8. Սրվանձտյան — Գարեգին Եպ. Սրվանձտյան (1840—1892) — անվանի բանասեր-բանահավար, որի հետ Աղայանը ծանոթացել ու մտերմացել էր 1861 թ. սկզբին, երբ Սրվանձտյանը ուղեկցում էր Մ. վ. Խրիմյանին վերջինիս Կովկասյան ուղևորության ընթացքում։

9. Մուրադյան Դարեգին, հեռագայում՝ Մելքիսեդեկ արքեպ. Մուրադյան (1836—1903) — ազգային-եկեղեցական գործիչ, հրապարակախոս ու մանկավարժ, Աղայանի մոտիկիո ծանոթ էր նրան՝ 1850-ական թթ., իրեն «Իֆլիսի հայ աշակերտական «Սիրազումար ժողովի» ղեկավարի:

10. Մկրյան — Հովհաննես քահ. Մկրյան (18 — 1909) — բանասեր, Մեսրոպ Քաղիաղյանի առաջին կենսագիրը: Մ. Խրիմյանի պատրիարքական տեղապահն էր 1869—1872 թթ.:

11. Մանկունի — Վահրամ եպ. Մանկունի — կրոնական-եկեղեցական գործիչ, բանասեր-պատմարան, Աղայանի նրա հետ ծանոթացել էր 1869—70 թթ. էջմիածնում: Նրանց փոխհարաբերությունների մասին տես՝ Ղ. Աղայան, Նրկերի ժողովածու, հատ. 4, էջ 430—450, 503—504 և 623, 634—636 և 645:

12. «Արևելք» թերթի հրապարակում էր Կ. Պոլսում (1884—1912 թթ.), սկզբի տասնամյակում Ջարեհ Յուսուֆյանի խմբագրությամբ:

13. «Մասիս» պարբերականը հրատարակվում էր Կ. Պոլսում (1852—1908 թթ.), հիմնադիր-խմբագիրն էր Կ. Ութուճյանը (1823—1904):

14. Սպանդարյան — Սպանդար Սպանդարյան (1849—1922) — ազգային պահպանողական ուղղության հրապարակախոս, «Նոր-դար» թերթի (1884—1908) հիմնադիր-խմբագիրը:

15. Արզար — Արզար Հովհաննիսյան (1849—1904) — ազգային պահպանողական ուղղության հրապարակախոս, «Փորձ հանդեսի» (1876—1881) և «Արձագանք» պարբերականի (1882—1898) հիմնադիր-խմբագիրը:

16. Խոսրո վերաբերում է կաթողիկոսական ընտրությունների համար արևմտահայերից պատգամավորներ ընտրելուն, որն արգելվում էր թուրքական կառավարությունը՝ նկատի ունենալով, որ ընտրության առաջին թեկնածուն նրուսաղեմ արքային Մկրտիչ եպ. Խրիմյանն էր:

17. Կ. Պոլսի պատրիարքն այն ժամանակ (1884 թ. սկսած) Մաղաթիա արքեպ. Օրմանյանն (1841—1908) էր:

18. «Բացասություն» — այսինքն մերժում էր ստացել թուրքական կառավարությունից (Բարձրագույն Դուռն):

19. «Դալֆայանի անկումն» — Խորեն արքեպ. Դալֆայան (Նար-Պեյ) (1831—1893) — բանաստեղծ-թարգմանիչ, դրամատուրգ, ազգային-քաղաքական գործիչ: 1878 թ. Բեռլինի կոնգրեսում «հայկական հարցի» քննարկման առնչությամբ՝ Մ. վ. Խրիմյանի ու Մ. Չերազի հետ, որպես հայկական պատվիրակության անդամ, եղել է Բեռլինում: 1890 թ. գալիս է Ռուսաստան և Կովկաս, հակաթուրքական քարոզներ է կարգում: Վերադառնալով Պոլս՝ 1892 թ. սկզբներին րանտարկվում է քաղաքական մեղադրանքով: Աղայանը հաղորդում է Պոլսի մտավորականության մեջ տիրող այն կարծիքը, թե Դալֆայանը «պիտի արքունի, բայց հայտնի չէ՝ ուր»:

20. Այս բառերով վերջանում է Աղայանի նամակից բերված հատվածը, որից հետո Ավ. Նզեկյանը ասում է. «Այդքանն է գրում կարևորներից մեր Ղազարիկը: ... Հաղորդածը հանգրստացնող չէ...» և այլն:

21. Անահիտ — Աղայանի դուստրն է, որ այն ժամանակ իր ավագ քրոջ՝ Հայկանուշի հետ բնակվում էր Բաքվում:

22. Նոր Նախիջևանը Աղայանի և նրա հետ միասին՝ Անդրկովկասի սահմաններից երկու տարով արտաքսված մյուս հայ մտավորականների (Այսթուանդր Ստեփանյան կամ Սև Սանդրո, Ատրպետ, Ռուրեն Խան-Աղաղյան, Երվանդ Ղազարյան, մանկավարժ Հովհ. Տեր-Միրաբյան և այլն) արքայազն էր: Այնտեղ էր մեկնել Աղայանն իր կնոջ ու երկու երեխաների (Մուշեղի և Լուսիկի) հետ միասին 1898 թ. մայիսի 2-ին: Աքսորավայրից Աղայանի գրած առաջին նամակը (1898 թ. մայիսի 18) հասցեագրված է Հովհ. Թումանյանին (տես Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հատ. 4, 1963, էջ 553 և 660):

23. Անահիտ Աղայանի այդ և մյուս նամակները անհայտ են:

24. Մկրտիչը (էհրամջյան) Աղայանի ավագ դստեր՝ Հայկանուշի ամուսինն է, որն իր րստանիքով և Աղայանի մյուս դստեր՝ Անահիտի հետ միասին բնակվում էր Բաքվում և իրեն մեքենագետ աշխատում տեղի գործարաններից մեկում:

25. Իր փեսային (Մկրտիչ էհրամջյան) գրած այդ և մյուս նամակները մեղ չեն հասել:

26. Անկախ Աղայանի այդ ցանկությունից, ինչպես գրում է նա Հովհ. Թումանյանին ուղղած 1899 թ. սեպտեմբերի 4-ի նամակում, Նոր-Նախիջևան արքայազնները մի «հրամանի» համաձայն տեղափոխվում են այլևայլ վայրեր, իսկ Աղայանը՝ Հին-Խրիմ և ապա Թեոդոսիա: Եվ ու 6-րդ նամակը:

27. Իրոք՝ Աղայանը արսորավայրում եռանդուն գրական աշխատանք էր կատարում: Այնտեղ է նա գրել մի քանի լեզվաբանական ու բարբառագիտական հոդվածներ («Ուտառի հնչյունը Ղարաբաղի բարբառում», «Տեր, Տար և Դեր բառերը Ղարաբաղի բարբառում»), «Երկու խոշոր չարիք» հոդվածը՝ ֆրանսիացի հոգևորականներ Ալֆրեդ Բինեի և Անրի Սիմոնի «Умственное утомление» գրքի մասին և, վերջապես, իր ամենանշանավոր հրապարակախոսական երկը՝ «Ժամանակակից ատենախոսությունը»:

28. Արսորի տարիներին Աղայանի կատարած թարգմանություններից են Կոտ Մուղիկայի «Ինչ է հերիաթը» և ամերիկացի գրող ու հրապարակախոս էդուարդ Բելլամիի «Ապագայի դարը» (կամ «100 տարի հետո») ուտոպիական վեպը:

29. Աղայանը վերջին անգամ էջմիածնում աշխատում էր 1893—94 ուսումնական տարում, իրրև Գևորգյան ճեմարանի վարժոցի վերակացու-դաստիարակ:

30. Խորեն եպ. Ստեփաննե («Հյուսիսագլխ»-ի բանաստեղծ Ստեփան Ստեփանյանը և իշխան Բագրատունին), որ հայտնի է նաև իրրև մանկավարժ, խմբագիր, հրատարակիչ, պատմաբան-բանասեր, 90-ական թվականների վերջերին Նոր-Նախիջևանի ս. Խաչ վանքի վանահայրն էր: Ստեփաննեի հետ ունեցած հին բարեկամությունը (60-ական թվականներից) Աղայանը շարունակում էր իր արսորի տարիներին: Այնտեղից վերադառնալիս՝ մի րաց նամակով (գրված 1899 թ. նոյեմբ. 30) Աղայանը «խորին շնորհակալություն է հայտնում իր և իր ընտանիքի կողմից՝ սիրալիր հյուրասիրության և խնամակալության համար» (տե՛ս Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 571):

31. Սուրենիկը Աղայանի թոռն է, Հոփսիկի երեխան:

32. Լուսիկը Աղայանի դուստրն է, հետագայում մեծանուն նկարիչ Մարտիրոս Սարյանի կինը (ծնվ. 1894 թ.):

33. Լուսիկ Աղայանի (հետագայում՝ Սարյան) գրած նամակներից մեկը միայն պահվում է հոր արխիվում:

34. Միքայել Խոջայան—Աղայանի երկրորդ դստեր՝ Հոփսիմեի ամուսինն է:

35. Իր գավակներին միշտ ներշնչելով սեր դեպի աշխատանքը և սեփական աշխատանքով՝ ապրելու կարևորությունը բացատրելով՝ Աղայանը միաժամանակ նույնիսկ արսորավայրից պարերաբար փող էր ուղարկում նրանց, թեև ինքն էլ մշտապես կարիքի մեջ էր:

36. Խոսքն իր ան կենսաթոշակի մասին է, որ ստանում էր Աղայանը Բաքվի հայոց մարդասիրական ընկերությունից (1897 թ. սկզբ): Նույն ընկերությունը, Աղայանի հետ միաժամանակ, կենսաթոշակ էր հատկացրել նաև Շիրվանշաղեին ու Հովհ. Թումանյանին (տե՛ս Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 551—553 և 669):

37. Հայտնի չէ, թե ինչ «լուր» է հաղորդել Թումանյանն իր նամակում, որովհետև այդ նամակը մեղ չի հասել: Բայց Աղայանի այս նամակում գրածից երևում է, թե խոսքը վերաբերում է Բաքվի մարդասիրական ընկերության նշանակած կենսաթոշակին:

38. Թումանյանի դրած այդ «առաջին նամակն» էլ մեկ հայտնի չէ:

39. Աղայանի ու Թումանյանի վաղուց սպառված նամակներից էլ հայտնի է, որ նրանք իրար դիմում էին՝ Ասյան բալա (Աղայանը՝ Թումանյանին) և Ասյան ապիր (Թումանյանը՝ Աղայանին) մտերմական մականուններով, որոնց հանդիպում ենք միայն Աղայանի արսորավայրից գրած մի շարք նամակներում, իսկ մյուս նամակներում նախ ստիբելի Օհանես, ազնիվ բարեկամ» և ապա ուղղակի՝ «ստիբելի Օհանես», իսկ Թումանյանի, առայսօր մեզ հայտնի նամակներում նա իր սրտակից ավագ ընկերոջն ու բարեկամին դիմում է նախ՝ «Հարգելի պարոն Աղայան», ապա՝ «Մեծարելի բարեկամ», «Լեծազգո բարեկամ» և հետո՝ «Ստիբելի բարեկամ» ու «Ասյան ապիր»:

40. Այս «մի անծանոթ տիկինը», որից Աղայանն արսորավայրում 25 դուրի է ստացել, հասարակական-մշակութային գործիչ իշխանուհի Մարիամ Թումանյանն է: Այդ մասին տեղեկանում ենք Հովհ. Թումանյանի նույն թվականի (1899) հուլիսի 24-ի նամակից՝ ուղղված նույն այդ «անծանոթ տիկնոջը»՝ իշխանուհի Մարիամ Թումանյանին: «Աղայանցը—հաղորդում է Թումանյանը նրան—ինձ մի նամակ է գրել—ասում է մի տիկնոջից փող եմ ստացել, և թե տեղը գիտես, իմ շնորհակալությունը հայտնի չորան: Ես այս շնորհակալությունը Ձեզ եմ ուղարկում» (Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 5, 1945, էջ 148):

Իսկ թե Թումանյանը Աղայանին գրած պատասխան-նամակում հայտնել է նրան, թե ով է այդ «անծանոթ տիկինը», մենք չգիտենք, որովհետև Աղայանին ուղղված այդ նամակը նրա մի շարք այլ (մտավորապես 10) նամակների հետ միասին, մեզ դեռ անհայտ է:

41. Պոռշը՝ Պերճ Պոռշյանն է, որն իր՝ նույն տարվա մայիսի 16-ին նշված 30-ամյա հորեղյանական նվիրատվություններից ստացած գումարից, իբրև ընկերական օգնություն, ուղարկել էր Աղայանին հիշյալ գումարը:

42. Աղայանի ստացած «նամակի շարունակությունն» անշուշտ սկիզբ է ունեցել, բայց երկուսն էլ մեզ հայտնի չեն:

43. Հազիվ թե Աղայանին և մյուս աքսորյալներին հայտնի չլինեին այն «նոր հանգամանքը», որի շնորհիվ հրաման էր եկել, որպեսզի բոլոր աքսորյալները «հեռանան Ռոստովի և Թագանրոգի շրջաններից»:

Աղայանի որդին՝ երաժշտագետ Մուշեղ Աղայանը, որ իր փոքր քրոջ՝ Լուսիկի և մոր հետ միասին, աքսորավայրումն էր, պատմում է, թե ինչպես, Նիկոլայ 11-ի 'Դոնի մարզի զորամասերն այցելելու նախօրեին խիստ հրաման էր ստացվել՝ նրա ճանապարհը և շրջակայքը «մաքրել» աքսորյալներից ու անվստահելի տարրերից:

44. Իր նոր բնակավայրը՝ Թեոդոսիա ժամանելուն պես 1899 թ. սեպտեմբերի 20-ին Աղայանը մի քանի նամակով հայտնում է իր հասցեն Թումանյանին (տե՛ս Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 568):

45. Երբ Աղայանը Գևորգյան ճեմարանում աշխատելիս՝ 1894 թ. վերջերին, նորընտիր կաթողիկոս Մ. Խրիմյանի վերաբերմունքից լիարժեք հեռանում է այնտեղից, նույն տարվա նոյեմբերի սկզբին կաթողիկոսի հատուկ կոնդակի համաձայն Սինոդը որոշում է՝ նկատի ունենալով, որ Աղայանն այլևս, «ի ծերութեան հասակի, դժուար լինի նմա ըստ առաջնոյն վարել զծանր պաշտոնս ուսուցչութեան, ուստի ասժան համարիմք ի վարձատրութիւն բազմաժեսայ աշխատութեանց իւրոյ՝ սահմանել նմա զկենսաթոշակ ի Մայր աթոռոյս երեք հարիւր ռուբլիս ի տարին» (Հայկ. ՍՍԽ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարան, Ղ. Աղայանի ֆոնդ, № 803 վավերագիրը): Աղայանի նամակում խոսքը էջմիածնի նշանակած այդ կենսաթոշակի վճարումը ավելի քան մեկ տարի ձգձգելուն է վերաբերում: Այդ մասին, ըստ երևույթին, Թումանյանն է գրել Աղայանին:

46. Ըր այս նամակի հետ միասին Աղայանը ուղարկում է Թումանյանին հետևյալ «ստացագիրը». «1897 թվականի հուլիսի մեկից սկսած ի հաշիվ իմ կենսաթոշակի՝ որոշված ս. Սինոդից, ստացա էջմիածնի Թիֆլիսի կալվածոց կառավարչից հայր Առյուծյանից երեք հարյուր վաթսու ռուբլի միանվագ»:

Ղազարոս Աղայանց»

(Գրականության և արվեստի թանգարան, Հ. Թումանյանի ֆոնդ, № 929):

47. Տե՛ս նախորդ ծանոթագրության մեջ բերված «ստացագիրը»: Դրանից պարզվում է, որ Աղայանի այս նամակում հիշված Հ. Թ. վ. Առյուծյանը «էջմիածնի Թիֆլիսի կալվածոց կառավարիչն» էր:

48. Մինասը — անվանի գրականագետ, քննադատ ու հրապարակախոս Մինաս Բերբերյանն է (1871—1919): Ինչպես պարզվում է աքսորավայրից Թումանյանին հասցեագրված մյուս նամակներից, երբ Աղայանը ժամանում է այնտեղ (Ն. Նախիջևան), հենց առաջին օրերին, նրա խորհրդով ու խրախուսանքով՝ Մինաս Բերբերյանը՝ աքսորյալների մասնակցությամբ, «գրականական ժողովներ» է հրավիրում: Այդ ժողովներից էլ ծնունդ է առնում «Կյանք» անունով մի պարբերական հրատարակելու գաղափարը: Աղայանի 1898 թ. հոկտեմբերի 20-ի նամակում ասված է. «Ահա երկու անգամ է, որ պ. Մինասի մոտ ժողովվում ենք մի գրական գործ սկսելու համար, բայց... գրական գործ սկսել այստեղ դժվար է, թեև Մինասը տաք տաք է կպած երևում» (Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 557): Դրանից մի քանի (մոտ չորս) ամիս հետո Աղայանն ուրախությամբ հաշորդում է, թե՛ «Մինասի «Կյանք»-ն արդեն մամուլի տակ է» (նույն տեղում, էջ 562): 1899 թ. փետրվարին Աղայանը Թումանյանին տեղեկացնում է, որ ինքը «տկարության պատճառով» չի կարողանում «Կյանք»-ի շաբաթական ժողովներին մասնակցել» (նույն տեղում, էջ 556): Բայց մի քանի ամիս անց՝ 1899 թ. հունիսի 11-ի նամակում Աղայանը այս անգամ տխրությամբ գրում է Թումանյանին. «Ինչ գիտես արդեն, որ Բերբերյանի «Կյանքը» կյանքի երեսը շտեպավ: Զուր տեղը անցյալ տարի այնքան աշխատեցինք, նյութերի պատրաստություն տեսանք» (նույն տեղում, էջ 556):

49. «Քո ուղարկված ուստիւրան չեմ տեսել» — սա գրել է Աղայանն ի պատասխան Թումանյանի մեզ անհայտ այն նամակի (գրված՝ հավանաբար նույն տարվա՝ 1899 թ. օգոստոսի վերջերին), որանդ, ըստ երևույթին նա Աղայանին տեղեկացրել է, թե ինքը մի «սատիրա» է ուղարկել, հավանաբար Մինաս Բերբերյանին, վերոհիշյալ «Կյանք» պարբերականում տպագրելու համար: Հավանական ենք համարում, որ Թումանյանի ուղարկածը եղել է ոչ այլ ինչ,

րան «Պոետն ու մուսան» սատիրա-պոեմը, որը գրված է 1899 թ. և որի նախնական վերնագիրը եղել է «Բանաստեղծը և սատիրը»: Փիլիպոս Վարդապարյանին գրած Թումանյանի նույն տարվա մի նամակից իմացվում է, որ այդ պոեմը նա սկզբում որոշած է եղել ուղարկելու Մոսկվա՝ «Հայ ուսանողների մի գրական ժողովածու»-ում տպագրելու, բայց բոտ Երևույթին հետո մտադրությունը փոխել և ուղարկել է Նոր-Նախիջևան, Մինաս Բերբերյանին՝ տպագրության պատրաստվող «Կյանք» պարբերականում զետեղելու համար:

50. Խոսքը վերաբերում է Պ. Պոռչյանի գրական գործունեության 30-ամյակին, որը Թիֆլիսում նշվել էր 1899 թ. մայիսի 16-ին: Ինչպես երևում է Աղայանի այս (նույն տարվա սեպտ. 4-ի) նամակից, Պոռչյանի հորեղյանը նշվել է նաև Նոր-Նախիջևանում:

51. Աղայանը չապրեց մինչև իր գրական ու մանկավարժական գործունեության 50-ամյակը, որը լրանում էր 1912 թ. մայիսի 19-ին: Նա վախճանվեց 1911 թ. հուլիսի 3-ին (հ. տ. հունիսի 20):

52. Թումանյանին ուղղված այս բաց նամակի գրության տարին և ամսաթիվը որոշել ենք փոստային կնիքի համաձայն: Արտոգրավարից վերադառնալով Թիֆլիս, Աղայանն այստեղ աշխատանք չի գտնում: Մի քանի ամիս հետո նա հրավիրվում է Բաքու, ինչ-որ պաշտոնի համար, ուստի և տեղափոխվում է ալետեղ:

53. Ինչպես ավելի որոշակի է դառնում հաջորդ (1900 թ.՝ դեկտեմբերի 7-ի) նամակից, խոսքը վերաբերում է «Ժամանակակից ատենախոսություն» երկին, որն արտատպվել էր Արասխանյանի «Մուրճ» ամսագրի 1898 թ. հոկտեմբեր-նոյեմբերյան միացյալ համարից (տե՛ս՝ Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 77—113 և 506—508):

54. Հայտնի չէ, Թումանյանը պատասխանե՞լ է Աղայանի այս նամակին, թե ոչ:

55. Չկարողացանք որոշել, թե Բաքվում ո՞վ էր այն «մեկը», որը խոստացել էր Աղայանի «գրքերը տպագրել», բայց հետո հրաժարվել իր խոստումից: Հաջորդ նամակից պարզվում է, որ այդ անձը խոստացել էր հրատարակել Աղայանի երկերը երկու հատորով:

56. «Տերին»—այսինքն՝ Սարգիս Բեգնազարյանին:

57. Առայժմ հայտնի չէ Թումանյանի այդ՝ «Բիրի-Հեյրաթ» ուղղած անթվական նամակը:

58. «X՝ 8-րդի ծնունդը»—Թումանյանի այդ երեսան, իրոր տղա է եղել և անվանակոչվել է Արեգ՝ Աղայանի այս նամակը կարդալուց հետո:

59. Հայտնի չէ, թե Աղայանին ինչ պաշտոնի համար էին հրավիրել Բաքու:

60. Աղայանը հետո նշանակվում է ուսուցիչ Բաքվի Սահակ-Մեսրոպյան դպրոցում և միաժամանակ մասնավոր դասեր է տալիս Լալայանների ու Աղամյանների երեսաներին:

61. Շիրվան—խոսքը վերաբերում է մեծանուն վիպագիր Ալ. Շիրվանզադեին, որին նյութական օգնություն էր ցույց տալիս հայ խոշոր կապիտալիստ Ալեքսանդր Մանթաշովը (1842—1911):

62. Խոսքը վերաբերում է Թումանյանի մտերիմ բնկեր ու բարեկամ Փիլիպոս Վարդապարյանին (1858—1935):

63. Ավ. Արասխանյանից և ապա Կրասիլնիկյանից հետո «Մուրճ» ամսագիրը վերջին շրջանում (1902—1907 թթ.) հրատարակվում էր հրապարակախոս ու հասարակական գործիչ Լևոն Սարգսյանի (1861—1927) խմբագրությամբ: Թե՛ Աղայանը և թե՛ Թումանյանը հրավիրվում են աշխատակցելու նոր «Մուրճ»-ին:

64. Բալֆայան Կարապետ—դերասան, որին հրապարակով իր պաշտպանության տակ էր առել Հովհ. Թումանյանը: Մի շարք նամակներում և մի քանի հոդվածներում («Տաղանդ և թթամտություն», «Դերասան Գալֆայանի մասին» և այլն) Թումանյանն անդրադառնում է այդ դերասանի գեհատմանը (տե՛ս Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 56—58 և 63—68): Այս նամակից երևում է, որ Աղայանը չէր բաժանում Թումանյանի բարձր կարծիքը Բալֆայանի մասին:

65. «Խրիմյանից հուսախաբվելուց հետո»—այս արտահայտությամբ ակնարկում է իր անբավականությունը Մկրտիչ Կաթողիկոս երիմյանից, որի վերաբերմունքից դժգոհ, Աղայանը հեռանում է Էջմիածնի Դեռոզյան ճեմարանից, որտեղ աշխատում էր 1893—1894 ուս. տարում:

66. Բալայանց Սեդրակ—(Արսեն) (1886—1918)—Աղայանի և Թումանյանի բարեկամներից էր՝ ուսուցիչ Բաքվում և տեղի գրական «Ոջախ»-ի հիմնադիրը:

67. «Առաջին նոմերից սկսած մինչև ութերորդը...»—այս արտահայտությամբ Աղայանը նկատի ունի Թումանյանի՝ մինչև այդ ծնված ութը գավակներին:

68. «Ի գուր...»—նամակը կիսատ է, շարունակությունը մեզ չի հասել:

69. Ստեփան Լիսիցյան (1865—1947)—մանկավարժ, գրող, «Հասկեր» մանկական ամսագրի (1905—1916) խմբագիրը:

70. Լևոն Շանթ (1869—1951)—գրող, բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ, մանկավարժ, Հովհ. Թումանյանի, Ստ. Լիսիցյանի և Լևոն Շանթի միասին 1907 թ. կազմում և հրատարակում են «Լուսարեր» անունով դասագիրքը տարրական դպրոցի չորս դասարանների համար: Այդ առնչությամբ Լիսիցյանն ու Շանթը 1907 թ. հուլիսի 28-ին մի նամակով դիմում են Աղայանին, որ նա համաձայնություն տա իր գրվածքներից ևս զետեղելու «Լուսարեր» դասագրքում: Նրանց նամակում ասված է.

«Հարգելի Ղազարոս.

«Մեր դասագիրքը կազմելիս, իբրև սկզբունք ընդունել ենք օգտվել մեր գրականության մեջ ամեն արժեքավոր գրվածքից և վարձատրել հեղինակին: Ձեզանից վերցրել ենք «Գյուլնազ տատի հեքիաթը», «Միտր ծառին» և «Հովվի անկողինը»: Ուզում ենք գիմել Ձեզ և հարցնել, թե որքան եք գնահատում այդ երեք կտորը, բայց Հովհաննեսը (այսինքն Հովհ. Թումանյանի, Ա. Ա.) անհարմար գտավ ու շտորագրեց նամակին. ասելով, թե «դա կը նշանակի, որ ևս էլ նրանից վարձատրություն եմ պահանջում նրա՝ իմ գրվածքներից վերցրած կտորների համար, մի բան, որ մեր մոտիկ ընկերական հարաբերության մեջ տեղի ունենալ չի կարող»: Այս ամենը աչքի առաջ ունենալով, որոշեցինք որ Դուք ու մենք օգտվենք իրարից փոխադարձաբար, ինչ չափով որ Ձեզ հաճելի կը լինի, բնականաբար առանց դրամական վարձատրության:

Հուսով ենք, որ Ձեր կողմից էլ մեր որոշումը ընդունելություն կը գտնի» (գրականության և արվեստի թանգարան, Ղ. Աղայանի ֆոնդ, N° 347):

71. Աղայանի կազմած դասագրքերը կոչվում էին՝ «Ուսումն մայրենի լեզուի» Ա, Բ, Գ և Դ տարի: Դրանցից առաջինի I տպագրությունը եղել է 1875 թ. և ունեցել է 33 հրատարակություն (վերջինը՝ 1916 թ.): Դրան հաջորդում են մյուս տարիների դասագրքերը՝ Բ և Դ 1889 թվականից, իսկ Գ-ն՝ 1906 թվականից, վերջին տարվանն ունեցել է միայն 4 հրատարակություն (1906—1914 թթ.): Հովհ. Թումանյանից Աղայանը նյութեր է զետեղել իր Բ, Գ և Դ տարիների դասագրքերում:

72. Աղայանի նամակն անստորագիր է, ըստ երևույթին Դոռացել է ստորագրել, բայց իհարկե, ուղարկվել է հասցեատերերին:

73. Ինչպես հայտնի է, Աղայանն ու Շիրվանզադեն շատ մոտիկ բարեկամներ էին: Այդ մասին վկայում են Շիրվանզադեի հունրահայտ հուշերը և նրանց երկուսի միջև եղած նամակագրությունը, որը, դժբախտաբար, լրիվ չի պահպանվել: Այս նամակն անթվակիր է, բայց բովանդակությունից պարզվում է, որ գրված է 1909 թ. վերջերին կամ 1910 թ. սկզբներին, երբ Աղայանը եռանդուն բանակով էր մղում մշակականների ու մխիթարյան բանասերների դեմ ի պաշտպանություն իր առաջարկած ու կիրառած ուղղագրության: 1909—1910 թթ. ուղղագրության հարցերի շուրջ Աղայանը բանակովում էր Ստ. Մալխասյանի, Լ. Մարկոսյանի, Ն. Տեր-Ղևոնդյանի, Համբ. Առաքելյանի, Սարուխանի, Շովրյանի, Մենեիշյանի, Կարապետ Յաղուրյանի և այլ գործիչների դեմ (տե՛ս Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հատ. 3, 1963, էջ 460—490): Այդ բանակովներում Աղայանն իր կողմն ունեւ Շիրվանզադեի և Թումանյանի համակրանքը և հրապարակային պաշտպանությունը: Աղայանի ուղղագրական սկզբունքները պաշտպանողների շարքումն է եղել նաև մեծանուն պատմաբան-բանասեր Նիկ. Աղունցը (1877—1942):

74. Քալանթար—Ալեքսանդր Քալանթար (1855—1913), «Մշակ»-ի խմբագիրը Գր. Արծրունուց հետո (1893—1913 թթ.):

75. Համբարձում—Համբարձում Առաքելյան (1855—1918), «Մշակ»-ի գլխավոր աշխատակիցներից մեկը և նախավերջին խմբագիրը (1914—1918 թթ.):

76. Սարուխան—«Մշակ»-ի աշխատակիցներից, որի դեմ նույնպես Աղայանը հողված է գրել՝ ի պաշտպանություն իր ուղղագրական սկզբունքների (տե՛ս Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հատ. 3, էջ 473—477 և 542—543):

ИЗ НЕОПУБЛИКОВАННЫХ ПИСЕМ ГАЗАРОСА АГАЯНА

А. А. АСАТРЯН

(Р е з ю м е)

В опубликованном недавно четвертом томе сочинений известного армянского писателя, педагога и общественного деятеля Газароса Агаяна помещено пятьдесят его писем. Однако это лишь небольшая часть многочисленных, частично еще не найденных писем Агаяна, адресованных многим его современникам и родным.

После сдачи в печать указанного тома, в разных архивах было найдено более двадцати писем Агаяна, наиболее важные из которых публикуются здесь. Эти письма написаны в 1884—1900 гг. из разных городов (Тифлис, Москва, Константинополь, Ново-Нахичевань, Старый Крым, Баку и др.) и адресованы армянским писателям Иоанниснану, Туманяну, Ширванзаде, ряду деятелей армянской культуры и родным. Особый интерес представляют письма Агаяна Туманяну, написанные из ссылки (1897—1899).

Новонайденные письма Агаяна важны не только как биографический материал, но и как дополнительные ценные документы для выяснения его многосторонней литературной, педагогической и общественной деятельности.